# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

«___» _____________ 2015թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օրգանական գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի ________________-ի
N ______-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների (այսուհետ՝ տնտեսավարող) կողմից օրգանական գյուղատնտեսության մեթոդի կիրառման վերաբերյալ ամփոփ հավաստի տեղեկատվության հավաքագրման և օրացուցային գրանցամատյանի (այսուհետ՝ գրանցամատյան) վարման ընթացակարգը:

2. Գրանցամատյանում ներառված տեղեկատվության միջոցով օրգանական գյուղատնտեսության ոլորտում համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման) մարմինը յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ իրականացնում է օրգանական գյուղատնտեսության միավորի արտադրական գործընթացի և փաստաթղթերի գնահատում:

## II. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Տնտեսավարողն օրգանական գյուղատնտեսության մեթոդի կիրառմամբ արտադրություն կազմակերպելու համար՝ առաջին անգամ գործունեության սկզբից, իսկ այնուհետև յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը, կազմում է ծրագիր և այն գրանցում գրանցամատյանում: Ծրագրում ներառվում են՝

1) անցումային շրջանի հողերի համար՝ ըստ դաշտերի կամ մշակաբույսերի ցանքատարածությունների, վերջին երեք տարիների ընթացքում պարարտանյութերի (անօրգանական (քիմիական), հանքային և օրգանական) և բույսերի պաշտպանության միջոցների օգտագործման մասին տվյալները.

2) աճեցվող մշակաբույսերը և դրանց զբաղեցրած տարածությունն ու վայրը՝ ներառյալ հողի բերրիությունը բարձրացնող մշակաբույսերի աճեցման հերթագայությունը (շրջանառությունը).

3) տնտեսավարող սուբյեկտի կողմից օգտագործվող տարածքում հողի կառուցվածքի և բերրիության, բուսական ու կենդանական աշխարհի բազմազանության և արժեքավոր լանդշաֆտների պահպանման ու բարելավման միջոցառումները.

4) իրականացվելիք ագրոտեխնիկական միջոցառումները, այդ թվում՝ պարարտացման համար օգտագործվող օրգանական կամ հանքային նյութերի անվանումները, ծագումը, նյութերի բնույթը, քանակը և օրգանական նյութերի կոմպոստացման պայմանները.

5) բույսերի և կենդանիների վնասակար օրգանիզմների դեմ իրականացվելիք պայքարի միջոցառումները.

6) վնասակար օրգանիզմների դեմ կիրառվող պայքարի միջոցների (ներառյալ անասնաբուժական դեղամիջոցների) օգտագործման նվազեցմանն ուղղված միջոցառումները.

7) անասնաբուժական և բուսաբուժական արտադրանքի փակ շղթայի ապահովման եղանակները.

8) անասունների խնամքի, արածեցման և կերակրման գործընթացներն ու ձևերը, արոտային սեզոնի ժամկետները, դրանց բարեկեցության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումները.

9) օրգանական և սովորական (ավանդական) զուգահեռ արտադրությունների կամ վերամշակման դեպքում օրգանական և սովորական արտադրանքի ու նյութերի առանձնացման սկզբունքները.

10) պահեստներում օրգանական և սովորական զուգահեռ արտադրությունների կամ վերամշակմամբ արտադրանքի առանձնացման ձևերը.

11) տնտեսություն՝ բույսերի պաշտպանության միջոցներ, անասնաբուժական դեղամիջոցներ, պարարտանյութեր, կերեր, հումք և այլ անհրաժեշտ նյութեր ներմուծումների չափաքանակները և դրանց կիրառման հիմնավորումը.

12) տնտեսությունում թափոնների կառավարումը:

4. Տնտեսավարողը գրանցում է արտադրության ընթացքում ծրագրում կատարված յուրաքանչյուր փոփոխությունը:

## III. ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Տնտեսավարողը գրանցամատյանում իրականացնում է հետևյալ օրացուցային գրանցումները՝

1) արտադրված գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի քանակական ցուցանիշները՝ ըստ ժամանակահատվածի և տեսակի.

2) բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցների անվանումները, արտադրողը, տեսակը, օգտագործված քանակը, օգտագործման ձևը.

3) գյուղատնտեսական կենդանիների տեսակը, գլխաքանակը, ծագումը, ներմուծման ամսաթիվը, օրգանական կարգավիճակը, անցումային շրջանը, եթե այդպիսին առկա է, անհատական համարանիշը, նախկինում ստացած անասնաբուժական միջամտությունը: Նույն ձևով գրանցվում են նաև գրանցումից դուրս եկող կենդանիների տվյալները.

4) անասնաբուժական դեղամիջոցների անվանումը, դրանք գնելու ամսաթիվը, քանակը, դեղամիջոցի ակտիվ բաղադրիչը, գնելու վայրը և մատակարարողը, պիտանիության ժամկետը.

5) բուժում ստացած կենդանիների համարները, ախտորոշումը, դեղաչափը, բուժման սկիզբը և ավարտը (ամսաթվերը), դեղամիջոցի կիրառման մեթոդը և օգտագործված ընդհանուր քանակը.

6) կերերի տեսականին, դրանց բաղադրամասերը և ստացման աղբյուրները.

7) արտադրված կենդանական ծագման արտադրանքի ծավալները՝ ըստ ժամանակահատվածի.

8) արտադրանքի, դրա առանձին բաղադրամասերի և մթերքի բաղադրիչ նյութերի վերաբերյալ տվյալները, վերամշակված արտադրանքի քանակությունը (խմբաքանակների թիվը), որոնք հնարավորություն կտան վերականգնելու արտադրության ամբողջ հետադարձ շղթան՝ ապրանքի առաքումից մինչև արտադրանքի ստացումը։

## IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Գրանցամատյանը տնտեսավարողի կողմից պահպանվում է առնվազն հինգ տարի։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի _________________-ի
N ______-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ

## I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ գտնվող մարդու սնունդ և անասնակեր հանդիսացող օրգանական գյուղատնտեսական արտադրանքի (այսուհետ՝ օրգանական արտադրանք), ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշմանը և պիտակավորմանը ներկայացվող պահանջները:

## II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

2. Սույն կարգում կիրառվում է հետևյալ հասկացությունը՝

***օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդ***՝ գյուղատնտեսական գործունեության առանձնակի տեսակ, որն առավելապես ներդաշնակ է ագրոէկոհամակարգերին և իրականացվում է համապատասխան նորմատիվ իրավական ակտերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան և հավաստվում է սերտիֆիկացման մարմնի կողմից:

## III. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Արտադրանքը կարող է մակնշվել որպես «օրգանական», ինչպես նաև կրել սերտիֆիկացման մարմնի անվանումը կամ նշագիրը և օրգանական արտադրանքի համապատասխանության նշանը, եթե սերտիֆիկացման մարմնի կամ նրա կողմից ճանաչված սերտիֆիկացման այլ մարմինների կողմից սերտիֆիկացված օրգանական ծագման բաղադրամասերը կազմում են հումքի կշռի առնվազն 95 տոկոսը, բացառությամբ ջրի և աղի: Մնացած 5 տոկոս բաղադրամասերը պետք է ընդգրկված լինեն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի անվանացանկում:

4. Մեկից ավելի բաղադրամասեր պարունակող արտադրանքի մեջ օգտագործված հումքի բոլոր տեսակները պիտակի վրա պետք է նշվեն իրենց չոր քաշի տոկոսային պարունակության ձևով՝ որպեսզի պարզ լինի, թե որ հումքն է սերտիֆիկացված, որը՝ ոչ: Բոլոր հավելումները պետք է նշվեն լրիվ անվանումներով և ընդգրկված լինեն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի անվանացանկում: Եթե համեմունքները և կանաչեղենը կազմում են արտադրանքի ընդհանուր կշռի 2 տոկոսից ոչ ավելին, ապա կարելի է դրանք նշել առանց տոկոսային արժեքների:

5. Եթե սերտիֆիկացման մարմնի կողմից սերտիֆիկացված օրգանական ծագման բաղադրամասերը հումքի կշռի 95 տոկոսից պակաս են, բայց 70 տոկոսից ավելի, ապա արտադրանքը չի կարող մակնշվել որպես «օրգանական», սակայն բաղադրության ցանկում կարող են նշվել օրգանական բաղադրամասերի անվանումները կամ հղումներ տրվել դրանց օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդով արտադրված լինելու մասին:

Օրգանական բաղադրամասերը պետք է գրված լինեն նույն գույնով, տառատեսակով, չափով, ոճով, ինչպես ոչ օրգանական բաղադրամասերը:

95 տոկոսից մինչև 70 տոկոս օրգանական սերտիֆիկացված բաղադրամասեր պարունակող արտադրանքի բաղադրամասերի ցանկում պետք է հստակ նշվեն արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ յուրաքանչյուր բաղադրամասի քաշը կամ տոկոսը: Այդ նշումը չպետք է ավելի ակնառու լինի, քան արտադրանքի մասին այլ տեղեկատվություն պարունակող գրությունները և պետք է ունենա հետևյալ բովանդակությունը՝ «գյուղատնտեսական բաղադրիչների . . . տոկոսն արտադրվել է օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդին համապատասխան»: Այս նշման հարևանությամբ կարող է զետեղվել նաև տեղեկատվություն այն մասին, որ արտադրանքը գտնվում է սերտիֆիկացման գործընթացում՝ նշելով սերտիֆիկացման մարմնի անվանումը կամ նշագիրը:

6. 70 տոկոսից պակաս օրգանական բաղադրամասեր պարունակող արտադրանքի մականշվածքում կամ պիտակի վրա արգելվում է հղում կատարել բաղադրամասերի օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդով արտադրված լինելու մասին, ինչպես նաև բաղադրամասերի ցանկում նշել օրգանական բաղադրամասի անվանումը ուղղակի կամ «օրգանական» բառի հետ կապակցված որևէ այլ ձևով: Այդպիսի արտադրանքը կարող է մակնշվել և իրացվել միայն որպես սովորական սննդամթերք:

7. Մակնիշի վրա զետեղվող «օրգանական արտադրության անցումային շրջանում ստացված արտադրանք» բառակապակցության բոլոր բառերը պետք է գրված լինեն նույն գույնով, տառատեսակով, չափով, ոճով: Այդ նշումը չպետք է ավելի ակնառու լինի, քան արտադրանքի մասին այլ տեղեկատվություն պարունակող մյուս գրությունները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

***<u>Անհրաժեշտություն</u>***

«Օրգանական գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 9-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները ի կատար ածելու անհրաժեշտությունից ելնելով մշակվել է «Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Նախագծի մշակման համար հիմք են ընդունվել Եվրոպական Միության «Գյուղատնտեսական արտադրանքի օրգանական արտադրության, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի ու սննդամթերքի վրա հղումների մասին» (EEC) N 2092/91 կանոնակարգը և Կոդեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի «Օրգանական մթերքի արտադրության, վերամշակման, մարքեթինգի և մակնշման ուղեցույցը»:

Կոդեքս Ալիմենտարիուս հանձնաժողովը հիմնադրվել է 1963 թվականին ՄԱԿ-ի Սննդամթերքի և գյուղատնտեսության կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից: Հանձնաժողովի գլխավոր նպատակն է պահպանելու սպառողի առողջությունը և հավաստելու սննդամթերքի միջազգային պրակտիկայում բարեխիղճ պրակտիկան: Կոդեքս Ալիմենտարիուսը Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից ճանաչված է որպես սննդամթերքի անվտանգության և սպառողների պաշտպանության հետ կապված քննարկումների միջազգային հսկիչ կետ: Հայաստանի Հանրապետությունը 1994 թվականից հանդիսանում է Կոդեքս Ալիմենտարիուս հանձնաժողովի անդամ:

***<u>Կարգավորման նպատակը և բնույթը</u>***

Որոշման նախագծի նպատակը օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների կողմից օրգանական գյուղատնտեսության մեթոդի կիրառման վերաբերյալ ամփոփ և հավաստի տեղեկատվության հավաքագրման և օրացուցային գրանցամատյանի վարման ընթացակարգի, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրգանական գյուղատնտեսության մեթոդի կիրառման վերաբերյալ ամփոփ և հավաստի տեղեկության ստացումն և օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշմանը և պիտակավորմանը ներկայացվող պահանջների սահմանումն է:

*Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք*

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին:

*Այլ տեղեկություններ*

«Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է հանրային քննարկումների: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ԵՎ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

## ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Որոշման նախագծի անվանումը՝**
«Օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գրանցամատյանի և օրացուցային գրանցումների վարման կարգը սահմանելու, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանում գտնվող արտադրանքի մակնշման և պիտակավորման կարգը հաստատելու մասին»

**Նախագիծը ներկայացնողը՝**
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

**ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝**

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

**Նախագիծը պատրաստողը՝**
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

______________________ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ
(ստորագրությունը)

«____» _____________ 2015թ.